

17298

Անուշահ.

891.99

Ս-41

№

1

ԱՌԱՆՑ
ՎԵՐՆԱԳՐԻ

1910

891-99

U-41

պ

1884

ՍԵՐՈՒՄԵԱՆ

Յ

Նշանի հետքեր ըստ



($\frac{1001}{3834}$)

== Ա Ռ Ա Ն Ց

ՎԵՐՆԱԳՐԻ ==



20 03

ԿԵՆՆՔԻ ԼԱՐԸ

Երեսուն տարին լրացաւ, ան-
ցաւ... Միշտ միայնակ՝ իր տանը
փակւած, վեր էր ձգտում նա, վեհը
ստեղծագործում: Կը դայ մի օր, թող
դա լինի գէթ մի ժամ, և նա կարող
կը լինի ապրել կեանքով լի. աշխա-
տել է նա, տքնել մեն-մենակ. սիրել,
փայփայել, համբուրել, դողացել...
Եւ այսպէս անցաւ երեսուն տարին...
Պատրաստ էր մեղեդին դիւթող լա-
րերի: Զուլթակը վերցրեց դէպ թառ-
րոն վազեց, դէպ թառրոն վազեց
նա խիստ շնչասպառ, ուր ժողովրդի
մի հոծ բազմութիւն սպասում էր
անհամբեր մեր մեծ տաղանդին...

Անթիւ, անհամար, մարդկային հա-
յեացքներ, մի շունչ, մի հոգի դար-
ձած միասին, երեսուն երկար տարի-
ներից յետ, առաջին անգամ այսօր
նրանք միայն, պիտի լսէին մեղեդին
սիրուն դիւթող լարերի...

21080-60

20-08-16

Չութակը ձեռին, նիհար ու գունատ,
սկսեց մեղեդին Չութակահարը մեծ:
Մեղեդին էր նոր, հնչիւններն էին
զիւթող. դողաց, մըմնջաց ու զիւթեց
ամենքին:

Մի շունչ, մի հոգի դարձած բազմութիւն, պատրաստ էր գոչել. «Կեցցէ՛ յաղթութիւն»...

Երբ մեղեդիի ափս սիրուն տեղում, որի համար Չութակահարը խեղճ տանջւել էր, չարչարւել երեսուն տարի, սիրել, փայփայել, դողացել ու լացել... Յանկարծ կտրւեց... Ա՛խ, լարը կտրւեց... Թուլացաւ ձեռքը... Ընկաւ Չութակը... Քարացած Չութակահարը գլխիկոր նայեց... Սառն, մենաւոր մի զոյգ կաթիլներ, ընկան նրա աչքերից, գլորւեցան ցած...

Իսկ Չութակի կողքին՝ Չութակահարը մեծ, երեսուն երկար տարիներից յետ, անշունչ, քարացած, մընաց տարածւած...



Ն Ի Ի Ի 22-ին

Ես հօ չեմ ուզում քեզ գովել...

Ես մոռնում էի կատաղած: Ես ձանձրացել, յուսահատւել էի կեանքից. ես կորցրել էի ամեն մի հաւատ դէպ մարդիկ...

Ակամայ ու անգուսպ դէպ անդունդ էի ես գլորւում, երբ յանկարծ... քեզ պատահեցի:

Այժմ ես հանգիստ եմ, խաղաղ, հաւատում եմ մարդկանց, սիրում եմ կեանքը և ուզում եմ ապրել:

Ես շատ եմ ուզում ապրել...

Ինչո՞ւ...

Դէհ, ես հօ չեմ ուզում քեզ գովել!...





ԱՆԻՐԻՆԻ ԵՋԵՐՔԻՆ

Թախիժ աշնանային ու մռայլը սև տիրել էին Օտտօի հոգուն:

Սիրում էր նա էմմային:

Էմմային սիրում էր նա ոչ պատանու խելառ, բուռն ու կրքոտ սիրով:

Սիրում էր վշտահար, յուսահատ...

Էմման՝ ընդունակ վեհ, գեղեցիկ կեանքի, ընդունակ սիրելու, տանջւելու, հերոսութեան ու ոճրագործութեան... յոգնել էր... Նա հանգիստ էր ուզում. նա յոգնել էր որոնումներից, նա յոգնել էր բարձունքներից. փափագում էր նա հովտի անդորրութեան ու նրա թանձր օդին... Նա երկար ապրեց այդ ան-

դունդի եղերքին, անդունդը քաշում էր նրան... Էմման յոգնել էր...

Օտտօն կանչում էր նրան, աղերսում ու լալիս:

Նա կանչում էր էմմային դէպի վեր, դէպի բարձունքները. խոստանում էր նրան գեղեցիկ հայրենիքը, նոր աշխարհ, նոր կեանք, մտքերի ու զգացմունքների մի նոր ովկեան...

Էմման լուռ էր. նա յոգնել էր ու հովիտն էր ձգտում...

Յուսահատ Օտտօն տանջւում էր, աղերսում, զայրանում ու լալիս: Նա նկարագրում էր հովիտը իր սարսափներով ու կեղտերով:

— Հովիտը իջնելով դու այլևս անկարող կը լինիս բարձունքները տեսնել, դու կը կորչիս անդունդում. հովտի խեղդուկ օդը կը սպանի քեզ, դու կ'ոչնչանաս... Էմմա! Էմմա! Գնանք դէպի վեր, մի՛ վատնիր ուժերդ դու հովտի համար: Նայիր, այնտեղ, լե-

ռան բարձունքին, փայլող վեներան
կանչում է մեզ դէպի վեր, դէպի
բարձունքները, կանչում է մեզ գե-
ղեցիկն ու վեհը ստեղծագործելու...

Գնանք էմմա!...

—Բարձունքները գնալու այլևս
ոյժ չ'կայ իմ մէջ, Օտտո. ես յոգ-
նել, այնպէս եմ յոգնել, հանգիստ
եմ ուզում: Կ'իջնեմ ես հովիտը, հան-
գիստ կ'առնեմ այնտեղ ու կրկին նո-
րից բարձունքները կը գամ և այն-
տեղ ծագող գեղեցիկ արշալոյսին ես
կ'երգեմ հովտի վշտոտ երգերը...

—Ով մի անգամ ճաշակեց բար-
ձունքները, էմմա, նա հովտում այլ
ևս անկարող է ապրել:

Իսկ հովիտը իջնելով, ուժերը վատ-
նելով, բարձունքները ելնելու ան-
կարող կը լինի: Գնանք դէպի վեր,
էմմա, ամեն մի գեղեցիկ, վեհ ու
պանծալի, բարձունքներում միայն
կարող ես գտնել:

Եւ կանչում էր ու կանչում Օտ-
տոն էմմային...

Յոգնած ու գունատ, անդունդի
եզերքին, կանգնած էր էմման:

—Մի ստիպիր, Օտտո, և ինձ ա-
կամայ դէպ բարձունքները սիրուն
մի տանիւր բեզ հետ: Ես թևեր չու-
նիմ, թռչել չըզիտեմ: Բարձունքնե-
րը տեսնել կարող է մարդ թևերով
միայն թռչել գիտնալով... Իսկ սո-
ղալով տեսնել բարձունքները վեհ,
երբէք և ոչ ոք չէ կարողացել դեռ...

Եւ էմման ընկաւ... Գնաց...

Օրհասական մտքի մէջ ընկած,
Օտտոն՝ մնացել էր տեղում բարա-
ցած:

Էսկ էմման գլորւում ու գնում
էր անդարձ...





Մ Ե Ժ Ա Ր Ի Ե Ս Տ Ը Գ Ի Ե Տ Ը

Քանդակել նրան փշեայ պսակով
իդէալն էր մեծ արձանագործի:

Թէ որ երրորդ ձմեռն անցաւ՝ ես
այդ չ'զիտեմ: Գիտեմ որ շատ ու
շատ, երկար տարիներ, աշխատում
էր նա իր արձանի վրայ... Փորում,
քանդակում, շտկում ու նորից ուղ-
ղում... Եւ այսպէս անցան կուր-
տանջանքի, բերկրանքի ու տառա-
պանքի շատ ու շատ երկար ու ձիգ
տարիներ. մինչև որ արձանը մեծ՝
յայտարարեց պատրաստ:

Բոլոր երկրներին, ամեն մի կող-
մին խուռն բազմութիւն գալիս է

անվերջ... Նայում են արձանին՝
«Ի՞նչ արտայայտութիւն:.. Ո՞րպիսի
հանճար»... Որ մարդկային ձեռք է
քանդակել, այդ անհաւատալի թւում
է բոլորին...

Նայում են արձանին, զարմանում,
հառաչում, հիանում ու լալիս:

Չանցած մէկ ամիս, մեծ արձանա-
գործի փառքը նախանձելի, բեկուից
բեկու, թնդում էր ուժգին... Իսկ ար-
ձանագործը մեծ անհանգիստ էր
ու դժգոհ... Նայում էր արձանին,
դիտում էր երկար, քայլում մտազ-
բաղ. կրկին կանգ առնում, նորից
խոր հայեացք ձգում, և կրկին նորից,
մի անգամ էլ դիտում...

Հազար ու մի մտքեր պաշարում
նրան, հազար ու մի զգացմունքներ
խեղդում էին նրան, մաքառում, հա-
մոզում ու կրկին նորից տանջանքի
մատնում...

Իսկ փառքը նախանձելի մեծ ար-

ձանագործի, բեռից բեռ թնդում էր ուժգին...

Իայց ինչպէս պատմել ըոպէն այն սոսկալի, երբ արձանագործը խեղճ տեսաւ իր առաջ խիստ սովորական, շատ աննշան, անյաջող մի գործ... Նւ իր արձանը հսկայ ճանաչեց նա անպէտք...

Վերջրեց մուրճը մօտեցաւ արձանին և մի քանի տասնեակ տարիներէ գործը, նա երկու ըոպէում, մուրճի հարւածներով գետին գլորեց...

Փառքը նախանձելի մեծ արձանագործի, բեռից բեռ թնդում էր ուժգին, իսկ բեկորներն արձանի՝ գլորւում ու կորչում էին անհետ...



Ի Գ Ե Ը Լ

Լուռ գիշեր է:

Շրջապատս խոր քնի մէջ է ընկղմւել: Ծառաստանի մօտ գտնւած, բլուրի վրայ կանգնած, խնդրում եմ լուսնից Նրան հասնելու ճանապարհը ցոյց տալ:

«Դէպի վեր,

«Ամպերից վեր.

«Ուր ապրում են,

«Արև ու աստղեր»...

Պատասխանում է ինձ լուսինը, ապա լողալով անցնում ու ինձ կլրկին մթութեան մէջ թողնում:

Զորս կողմս հսկայ լեռները Կազ-

բէկ պապի հետ, անտառը, գեղեցիկ
ծառաստանը... Եւ մեռելային այդ
լուծեան մէջ ականջիս են հաս-
նում, մի այլ աշխարհի, մի նոր երգի
հեռաւոր ձայները, որոնք ձուլւելով
թերէքի տխուր մեղեգիի հետ, կա-
տարեալ են դարձնում այդ խորհրդ-
դաւոր գիշերի հարմանեան:

Ահա այստեղ ես զգում Արարչի
սքանչելագործութիւնները, այստեղ
ես տեսնում բնութեան հրաշա-
լիքները, այստեղ են ծնւում մէջդ
վեհ ու ազնիւ զգացմունքներ և կա-
խարդական այդ ըոպէին մոռացած
դրսի աշխարհի, առօրեայ կեանքի
մանր հաշիւները, խնջոյքներն ու
անմիտ գլարծութիւնները, ապրում
ես մի այլ կեանքով, մի այլ աշ-
խարհում...

Բայց ահա անցնում է կախար-
դական այդ ըոպէն, բացւում է վա-
րագոյրը դառն իրականութեան, ան-

յայտանում, չքանում են աչքիցս
հրաշալիքներն այդ բոլոր, իսկ ես
դարձեալ միայնակ, դարձեալ խա-
ւարում նորան եմ փնտռում...

Դիտում եմ հեռուն և անծայր այդ
մթութեան մէջ նորա պատկերն եմ
տեսնում. սկսում եմ նրան կանչել,
նրան որոնել. իջնում եմ բլրից,
գնում եմ դէպի նրա հրեշտակային
պատկերը, բայց նա չի մօտենում.
Նա մնում է իր տեղը կանգնած, իսկ
ես ծառաստանում, ծառ ու ծաղ-
կունքի մէջ նրան եմ որոնում...

Յանկարծ ինձ թւում է, որ ահա
նա գալիս է, նա մօտենում է ինձ.
ուզում եմ նրան գրկել, ուզում եմ
դէպի բլուրը տանել, ուզում եմ բը-
նութեան այդ գեղեցիկութիւնները
կատարեալ դարձնել: Նա ժպտում է,
նա մօտենում է, մի քայլ ևս և նա
իմ գրկում կը լինի...

Աւանդ! Մեկնած ձեռքերս օդի մէջ

են մնում... Նայում եմ հեռու, կան-
չում եմ Նորան, որ գէթ հեռւից մի
անգամ էլ նայէ... Նա չի երևում և
երևակայութեանս ստեղծած պատ-
կերն այդ հրեշտակային, չքանում
իմ աչքից: Իսկ ես տանջւած սրտիս
հետ, մնում եմ դարձեալ խաւարում,
դարձեալ միայնակ և միշտ անծայր
ու անսահման հեռուն եմ դիտում...

Բայց ահա ՆՈՐ ԵՐԳԻ ձայները
կրկին շնչում են ալանջիս՝ «Ծա-
ռաստանի ծաղկունքի մէջ ՆՈՐԱՆ
մի փնտռիր: Գնա՛ն դէպի վեր, ամպե-
րից էլ վեր, ուր ապրում են արեւ ու
աստղեր»...



18K
ԳԻՆԸ 50 Կ.

Հրատարակիչ՝ Լ. Երոն Պողոսեան

Դիմել՝ Թիֆլիզի գրադատճառներին և
հրատարակչին՝ Տպարան «Կուլտուրա» Ընկ.